

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

ՊՐԻՍԵՂԻ ՆՈՒՊԱՐԵԱՆ ՍԱՆՆԵՐՈՒ ՀԻՄՆԱԲԿՈՒԹԻՒՆ
ԲԱՐԻՉԻ ՄԱՐԻ ՆՈՒՊԱՐ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՏՈՒՆ

1. Յաւալի է որ Նուպարեան Սաներու Վարչութիւնը, նիւթական միջոցներու անբաւականութեան նեւեւանով, որովհետեւ բացի իր եկամուտներուն նուազումէն, հարկադրուած է քանի մը տարուան համար կարելու տուր մը վճարել Լոնտոնի մէջ: Երբ չի յաջողի հարկագործուիմ ձեռք բերել, իր Յունիսի գումարման մէջ յաւաքիկայ տարուան համար ո՛չ մէկ նոր սանի կրցած է պուրս յաշկացնել:

Այս պարագան աշխատանքի ցաւալի է որ, առանց նկատի առնելու թէ այդ նիւթագրամը սահմանափակ է, եւ թէ պուրս ստացող սաները քանի մը տարի վերջ միայն շրջանաւարտ ըլլալով իրենց բռնակը կրնայ տրամադրել ըլլալ, ամէն կողմէ շատ մեծ թիւով ուսանողներ կը դիմեն թէ՛ այդ Վարչութեան եւ թէ՛ Միութեանս, մեծ յոյսեր դնելով իրենց թեկնածութեան եւ ձեռք բերած յանձնարարականներուն վրայ, որով երբ հարիւրակ մը թեկնածուներուն մէջէն ոչ մին կամ հազիւ 1-2ը միայն կ'ընտրուին, զաւտօրէն կ'ենթարկուին յուսախաբութեան: Պատճառն այն է որ չեն ըմբռնիր թէ շա՛տ դժուար է ընդունելութիւնը, մանաւանդ որ ըստ կտակարարի նախապատուութիւնը կը տուի բոլորովին չեւտուր եւ առաւելագոյն որք ուսանողներու, անոնց որ օժտուած են բացառիկ ընդունակութիւններով, պիտի նետուին ուսուցչութեան, ֆիւլթաքսութեան, երկրաւարականութեան, մեքենագիտութեան, երկրաշարժութեան նման մասնագիտութեանց, եւ յանձն կ'առնեն ուսանիլ Պիլնիթայի մէջ եւ իրենց մասնագիտութիւնը հետագային կիրարկել Հայաստանի մէջ, որով եւ պարզ է թէ շատերը զո՛ւր տեղը կը գնեն իրենց թեկնածութիւնը, գիտնալով թէ այդ պայմաններուն տակ իրենց կը սպասէ անյաշտութիւնը:

2. Ոչ նուազ ցաւալի իրողութիւն մըն է որ ողբացեալ Պօլոս Նուպար Փառայի նիւթանոց Ուսանողական Տունը, որ Բարիզի Սիբե Ինիվերսիթեռի գեղեցկագոյն շէնքերէն մին է եւ ունի 70 ի չափ սենեակներ, նետգնէ կը պարպուի հայ ուսանողներէ, որոնց թիւը սկզբնական 30-40 էն այժմ 8 ի իջած է, եւ կը սպասուայ աւելի եւս նուազիլ: Պատճառները բազմաթիւ են, ոմանց համար որոշուած ամսավարձը (200 Ֆրանկ) շատ կու գայ, ուրիշներ իրենց երկրէն դրամ չեն կրնար ընդունիլ՝ արտածութեան ներկայ սեղմիչ օրէնքներուն նետեւանով, իսկ կան ալ որ գուրար իրենց փորձանաւոր ազատութիւնը կը նախընտրեն առաւելագոյն, զոնելով այն բացարձակ հանգիստը եւ դիւրութիւնները զոր կ'ընծայէ Մարի Նուպար Ու. Տունը, իր անբազաւտի առաւելութիւններով: Դժբախտաբար ճնողները, խնամակարները կամ մեկեմանները եւս չեն անգրագաւմար անպատեհութեանց եւ իրենց զաւակներուն կամ պատշտանեալներուն չեն պարտադրէր Ուսանողական Տան բնակութիւնը:

Այս դրութիւնը ասեմէ մը ի վեր մտանդութիւն կը պատճառէր Միութեանս Կեդր. Վարչ. Ժողովին, ինչպէս նաեւ Նուպարեան ընտանիքին, որ Սիբե Ինիվերսիթեռի Վարչութեան ուշադրութիւնը հրաւիրելով հանդերձ այս վրդովեցուցիչ վիճակին վրայ, կը խորհին նոր միջոցներ ձեռք առնել Բարեբաղին կամքը յարգելու եւ Հիմնարկութիւնը ըստ կարելոյն իր բուն նպատակին ծառայեցնելու համար, մինչդէռ այս ընթացքով բոլորովին պիտի կորսնցնէ իր հայկական բնոյքը, քանի որ Ֆրանսացի ուսանողներ կ'օգտուին մեծ մասամբ:

Ոչ նուազ ցաւալի երեւոյթ մըն է սա պարագան ալ որ Բարեբաղը նիւթագրամ մը յաշկացուցած էր, որպէս զի Ուսանողական Տան մէջ հայերեւնագիտութեան զասախօսութիւններ կատարուին, եւ սակայն հակառակ որ այդ գործը վստահուած է Տ. Արշակ Զօպանեանի նման մեծ գրագէտի մը, ընդհանրապէս սակաւաթիւ ունկնդիրներ միայն նետեւած են, որոնց թիւը բարեբախտաբար վերջերս քիչ մը աւելցած է Բարիզի Ուսանողական Միութեան շանքերուն շնորհիւ: